

կը գտնէր իւր եղբայրը զՎարդան Մամիկոնեան հոն «*յիւրո՞ժ գաւառին է Տայս*», յիւր ամուր բերդին՝ որում անուռն Երախանի կոչի»։ Հայ անուռները կը հասնին յամենայն դէպս գոնէ մինչեւ Արդուին։ Այս կողմերը կը սահմանակցէին նաեւ Տայոց նահանգն ու Գուգարաց նահանգի Կղարջք գաւառը։ Արդուինի մօտերէն սկսեալ, ինչպէս սահմանադրութիւններու բնակչութիւնը սովորաբար կ'ըլլայ, արդէն հին ժամանակ խառն բնակչութիւն մը գտնուած ըլլալու է։ Արդուին այսօր հայ քաղաք մըն է. բայց դէպ ի ծով շրջակայ մահմետականաց մեծ մասն այլ եւս հայ-մահմետական չէ։

Տայոց աշխարհի միւս բոլոր գաւառները (— բաց ի Կողէ, որ Կուրի ականց վրայ է, —) կը գտնուին այն երկու գետոց աւազաններուն մէջ, որոնք այսօր ընդհանուր առմամբ կը կոչուին Թորթումի-ջուր եւ Օլթիի-ջուր։ Ասոնք լեռնագծով մ'իրարմէ բաժնուած՝ ուրոյն եւ ուրոյն կ'ընթանան. բայց ի վերջոյ կը միանան եւ իբր մէկ գետ Ճորոխ կը թափուին, գրեթէ այնչափ շատաջուր՝ որչափ Սպերէ եկող Ճորոխն է։ Թորթում գաւառին կը վերաբերի հարաւային երեսն այն լեռնագծին, որուն հիւ-